ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՊԻՉ ՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀՀԱՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք.Վեդի 25 ապրիլի 2023թ
ժամը՝11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝Ռ.Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Ավետիսյան, Ա.Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Սեյրանյան

.Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման,յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

ՀՀԱՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/07 **ծածկագրով ընթացակարգի** 2 չափաբաժնի համար հրավերի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել Նոլան ՍՊԸ:

29.03.2023թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ 10 օր:

14.04.2023թ. ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագրի նախագիծը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Նոլան ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել Նոլան ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության

դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

2. Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետով ՀՀԱՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/07 **ծածկագրով ընթացակարգի** 2 չափաբաժինը հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ 0

Հանձ. նախագահ՝ _____ Ռ.Հակոբյան

Անդամներ՝ _____ Ա.Ավետիսյան

_____ Ա.Հակոբյան

Քարտուղար՝ _____ Լ.Սեյրանյան